ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N11-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով.

Արուճ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 8-ի հերթական նիստի օրակարգը:

1.Արուճ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ:

2.ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ համայնքի << Համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում >> և <<Համայնքի փողոցների արտաքին լուսավորության աշխատանքների իրականացում >> սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու վերաբերյալ:

3.Արուճ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մարտին Այվազյան

2.Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N12-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

Արուճ համայնքի ավագանին որոշում է՝

Հավանության տալ Արուճ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությանը՝համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մարտին Այվազյան

2.Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արագածոտն մարզի Արուճ համայնքի ավագանու

2020 թվականի ապրիլի 8-ի թիվ 12-Ա որոշման

Արուճ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի կատարման ընթացքը.

ԲՅՈՒՋԵ	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ	ՏՈԿՈՍ
Հողի հարկ- 1125.0	461.4	41.0
Փոխ.գույքահարկ-900.0	680 .2	75.5
Շին.գույքահարկ-70.7	18.3	2 5.8
Հողի վարձավճար-437.5	289.2	66.0
Այլ եկամուտ -875.0	693.1	96,0
Տեղական տուրք- 88.0	76,0	79.0
Աղբ.վճար - 200.0	90.3	45.0
Դոտացիա - 5282.9	5282.9	100,0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Մարտին Այվազյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Ը.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀայաստանիՀանրապետությանԱրագածոտնիմարզի
Արուճհամայնք, էլ. փոստaruch.aragatsotn@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
08 ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»ԵՎ<<ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>>ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻՀԱՅՏԻՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒ ՆՏԱԼՈՒՄԱՍԻՆ՝

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» ՀՀօրենքի18-րդհոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով՝

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված«Արուճ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում»և <<համայնքի փողոցների արտաքին լուսավորության աշխատանքների իրականացում>> (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայիհայտին՝ համաձայնհավելվածի:

2.Սահմանել որ՝

1)Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարաններ կայացնել տնտեսական ևսոցիալական ենթակառուցվածքների զարգացմաննուղղված ծրագրի ֆինանսավորման հայտը:

2)ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու ևհամայնքային ներդրում կատարելու համար:

3)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Արուճ համայնքի ղեկավարը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1 ՄարտինԱյվազյան
2 ՏիգրանԱվետիսյան
3 ԳեղամԿարապետյան
4 ԿորյունՀովհաննիսյան
5 ԵրվանդՄանուկյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

08 ԱՊՐԻԼ 2020 ԹՎԱԿԱՆ N 14-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի >>11.03.2020 թվականի թիվ 39 դրական եզրակացությունը.

Արուճ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության ,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 7.2157 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր /կադաստրային ծածկագիր՝02-022-0150-0017/ փոխադրել էներգետիկայի ,կապի, տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1.Մարտին Այվազյան

2.Երվանդ Մանուկյան

3.Տիգրան Ավետիսյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան